



61. ՏԱՐԵԿԱՆ ՄԵ ԽՈՍԿ

Ժամանակով մե ջեղի մեջ մե մարթը-կնիկ ին աբրում: Ըստոնք ունին չորս էրեխա. ամենաջոյը քասան տարեկան էր, մե օր էլ գնաց, չեկավ: Խերը շատ ման էկավ, դես-դեն հընգավ, տղին չըքթավ: Տան աշխատավորը մնաց մինակ հինքը: Շատ ախկատացավ էս մարթը, մնաց օրեխացի կարոտ:

Տեսավ՝ էլ հնար չըկա, մե օր էլ ասավ.—Այ կնիկ, էլ հնար չըկա, դու բդի էրեխեքը պախես, ես էթամ մե տեղ, աշխատանք անեմ, բալքի մե քանի կոպեկ փող բերեմ, ըսենց մնալով չի հընի: Մեր տղեն սաղ հըներ, կէթեր մե տեղ կաշխատեր, ես էլ ըստե տան զործը կանի: Մկա դու ես հիմանում: Իրեք էրեխեն թողում եմ քո ումուղին, իրեք տարի տուն չեմ գա, իրեք տարի եսո՞ մե մանեթ էլա, որ աշխատեմ, կըգամ: Դու էլ ըստու-ընդու մոտը լվա՛ծք արա, խա՛ց թխա, էրեխեքը պախա՛:

Խեխան կնիկը ի՞նչ աներ: Էրկու խաց դրեց մարթի խետ, մարթը հընգավ ճամբա: Գնաց, գնաց, մե չոլի մեջ տեսավ մե տուն, դոնաղ չելավ:

Տանտերը խառցուց.—Ի՞նչ մարթ ես, հո՞ւր ես էթում:

—Ես ախկատ մարթ եմ,—ասավ դոնաղը, —էթում եմ մե տեղ, մե աշխատանք քթնեմ, էրեխեքս պախեմ, շատ նեղի եմ: Էթամ էս մոտիկ ջեղը, տենամ՝ հարուստները մշակ չե՞ն բռնի:

Տանտերն ասավ.—Ընձի էլ ա մշակ պետկ, հըմա վախենում եմ չըհամաձայնվես:

—Հընչի չեմ համաձայնվի, բանիս անո՞ւնն ինչ ա, հո աղա չե՞մ, մշակ եմ, ինչ զործ ասես, էն էլ կըկատարեմ:

—Զիդո՞ւմ ես՝ ինչ կա, ախպե՛ր, —ասավ տանտերը, —ես մշակին հախ չեմ տալում, խացըփոր եմ բանցնում, տարվա վերչըն էլ մե խոսկ եմ ասում հախի տեղը: Զիմի թե դու համաձայն ես էտ պայմանին, մաց իմ մոտ աշխատա՛, համաձայն չես՝ իմ դոնաղն ես, իմ աշկի լուսն ես, իշքան ուզում ես, մա՛ց, ճե՛, խմա՛, վրետ խոսող չի հընի:

Էս մարթը մտածեց, մտածեց, ասավ.—Խաղեն, համաձայն եմ, մե տարով պայման անենք:

Բերին մե տարով պայման արին, էս մարթն սկսեց աշխատել: Շատ լավ էր աշխատում: Մինակ իրեք մարթի գործ էր կատարում: Հինքն հիրան մտածում էր. «Մեկ ա իրեք տարի բղի տուն չէթամ, ըլլա էս մե տարին էլ թո էսենց դարտակ հընցնի, տենանք՝ վերչն ի՞նչ ա հըլնըմ»:

Էս հարուստի տանը ջուր էր բերում, վարուցանքն էր անում, քաղում էր, բերում ծեծում, մե խոսկով՝ ջեղացու հըմմեն աշխատանքն էլ կատարում էր, հիրկուն զալում, հիրա տեղը քնում:

Տարին որ թմմավ, մշակն էկավ հարուստի մոտ ու ասավ.—Խաղեն ջան, տարին թմմավ: Ծնորակալ եմ, դու ընձի լավ պախիր, ես էլ իմ ուժի ջորա աշխատեցի: Ես իմ կողմից շնորակալ եմ, արի հախս ասա՛, տենամ՝ ի՞նչ ա:

Տանտերն ասավ.—Ասեմ: Որ մե տեղ կէթաս, ինչ որ կնկատես, եթե չեղի չի վերաբերվում, չըխառնվես:

Էս մարթը մտածեց, մտածեց ու ասավ.—Մե տարի էլ կաշխատեմ, հոժա՞ր ես:

—Հընչի՞ հոժար չեմ, —ասավ տանտերը, —աշխատա՛:

Մարթը նորից աշխատեց: Գործին ծանոթ էր: Էլ չին ասում՝ է՛ս արա, է՛ն արա, ըստե՛ գնա, ընդե՛ գնա: Էս տարի հավելի լավ աշխատեց:

Տարին որ թմմավ, էլի էկավ տանտիրոչ մոտը, ասավ.—Խաղեն ջան, տարին թմմավ: Քո աղը-խացից շնորակալ եմ, արի՛, հախս ասա՛:

Տանտերն ասավ.—Ասեմ, հընչի՞ չեմ ասի: Քո մե տարվան հախն էն ա, որ ինչ որ չեղի հանձնեն, վստահեն, բաց չանես, տեղ խասցուս, ետո բացես:

Էս մարթը մնաց մե տարի էլ աշխատեց: Որ տարին թմմավ, էկավ, թե.—Խաղենին, իրեք տարին թմմավ, հախնըհախ բղի էթամ տուն, դու հիմանում ես, թե իմ տունն ինչ դրութուն ա, հիմի էրեխեքս սա՞ղ են, թե՞ մեռուկ, արի հախս ասա՛, հընգնեմ ճամբար:

Տանտերն ասավ.—Ասեմ, հընչի՞ չեմ ասի: Որ ետ կէթաս քո տունը, վատ բան կրտենաս, հըմա առանց մանդրամաս ստուգելու՝ դու էլ վատ բան չանես: Ստուգա՛, հիմացի՛, ետո որոշո՛ւմ խան, որ ետո քո արածի խըմար չըփոշմնես:

—Է՛հ, շնորակալ եմ, խաղենին, քո աղը-խացը խալա՛լ արա, ես շնորակալ եմ, դու քո խոսկը կատարիր, լավ խրատներ տվիր, ընձի էլ լավ պախիր, քո տղից յա ախպորից չըջոկիր:

—Աղը-խացը խալալ եմ անում, հրմա մա'ց, հէքուց գնա՛, չեզի
մեշու ճամբի խաց թխենք:

Էս մարթը հառավոտ խացը տվեց, ասավ.—Խրատները մի՞տտ
ա, թե՞ մըտետ գնացեր ա:

Ասավ՝ միտս ա:

—Դե որ միտս ա, իրեքն էլ ասա՛:

Մշակը իրեք խրատն էլ կրկնեց:

Խազեինն ասավ.—Իշքան անոթի հըլնես, հուրիշ անոթի մարթ
պատահի, էս խացը ո՞նչ դու կուտես, ո՞նչ հուրիշի կրտաս: Կրտա-
նես քո տունը, կնգատ, էրեխեքիտ խետ կըճիսես, կուտեք: Մացած
խրատներն էլ պախա՛ մտիտ, չըմտահան անես:

Մշակը խացը վերցուց փաթըթեց հիրա մեշոքի մեչը, մե կտոր
սոմի էլ վերցուց ճամփին ուտելու, գնաց: Գնաց, գնաց, հիրկուն
դոնաղ հելավ մե մարթի տուն: Էս մարթի տունը էրկու ախակեր ին,
հիրկուն սկսին հիրար տփել: Տիկն հիրար գլոխ-մլոխ ջարթին: Տե-
սան՝ էս մարթը մոտ չի գալում:

Մե ախակերն ասավ.—Ա՛յ մարթ, հո քա՞՞ր չես, մե արի բաժնա՛:

Ղոնաղն ասավ.—Դուք էրկու ախակեր եք, ինչ ուզում եք, արեք,
ես օտար մարթ եմ, հենց հիմանանք՝ հէսօր ըստե չեմ էկե: Դուք
որ էրկու ախակեր հիրար լիզու չեք խասկընում, ես ձեզի ի՞նչ բդի
խասկցում: Թե չեք ուզում, ես կըհըլնեմ կէթամ:

Էս մարթիքը կովին վերչ տփին, էկան նստան: Ղոնաղը տեսավ,
որ էն արնվա հելուկ մարթկանց վրեն մե կաթ էլ արուն չըկա, հի-
րար խետ նստան, ջանը-դուրբանով խոսացին, ճերան-խման: Էս
մարթը զարմացավ, հրմա էլի բան չըխացցուց:

Հառավոտ հելավ էթալու, տանտերն ասավ.—Տենում եմ՝ չափի
մարթ ես, ա՛ո էս տասաը ոսկին, չեզի պետկ կըգա, էրեխեքին մե
բան կառնես, նոր կէթամ տունը:

Էս մարթը ոսկիքը քցեց ջերը, չնորակալութուն հայդնեց, հըն-
գավ ճամբա: Գնաց, գնաց, ճամբեն պատահավ մե խեխմ մարթի:

Էս մարթն ասավ.—Ախակե՛ր, անոթի եմ, մեշու խաց չունե՞ս:

—Ախակե՛ր ջան, —ասավ էս մարթը, —էս խացը տվողն ընձի
թամբեխ ա արե, որ ճամբեն ձեռ չըտամ, չանքի խասնեմ տունը, իմ
էրեխեքի խետ նստեմ խացի, ետո կդրեմ, հրմա էսօր մե տեղ դո-
նաղ հելա, տասաը ոսկի տփեց, ա՛ո խինզը չեզի, թո խինզն էլ մնա
ընձի, էրեխեքին բան բդի առնեմ:

—Ա՛յ մարթ, —ասավ էս խեխմ մարթը, —դու խինզը ոսկի տա-
լում ես, մե կտոր խաց չե՞ս ուզում տա:

—Զեմ կանա տա, ախակե՛ր ջան, խոսկ եմ տվե, խոսկը թանգ
ա ամմեն բանից, հիմի ուզում ես՝ նեղացի՛, ուզում ես՝ մի՛ նեղա-

ցի: Դուզութունը լավ բան ա, ընձի վստահեր են, ես չեմ կանա էն մարթի խոսկը չըկատարեմ, ես ընդու խացը իրեք տարի ճերեր եմ, Հիմի ընդու ասածը չըկատարե՞մ:

Էս որ ասավ, մեկ էլ տեսավ հառեչը մարթ չըկա: Էս մարթը ճամբեն շարունակեց, գնաց մե տեղ, էրեխեքին չարագ-մարագ առավ, շոր առավ, կնգան դեյրա առավ, էտքանին էրկու ոսկի ան-ջաղ գնաց: Ըտոնք կապեց, քցեց շլակը, հընգավ ճամբա:

Հիրկուն մութն հընգավ, խասավ հիրան տունը: Դուռը բացեց, ներս մտավ, տեսավ՝ հըմմեն քնուկ են, հըմա կնգա խետ մե տղա-մարթ ա պարկուկ:

Արունը տվեց գլոխը, ուզեց բալթեն վերցա, տա էրկսին էլ սպանա, մեկ էլ միտն հընգավ խազեինի ասածը, կնգան հերսոտ-հերսոտ զարթնցուց, ասավ.—Էտ ի՞նչ մարթ ա խետու քնուկ:

Կնիկը աշկերը բացեց, տեսավ հիրան մարթը, վեր թռավ, ասավ.—Մա՛րթ, աշկա լո՛ւս, մեր կորուկ տղեն քժնվավ: Էտ իմ բալեն ա քնուկ, թո քնի, մի՛ զարթնցու:

Խերը էլ կը համփերե՞ր, որ չըգարթնցներ, կզկավ հերեսնե-րը պաշեց, տղեն զարթնավ, մեկէլ էրեխեքն էլ զարթնան, էնենց ուրիշան, որ էլ չեմ կանա ասի:

Կնիկը ծծղալով մարթին ասավ.—Ա՛յ մարթ, բա ասում իր իրեք տարի չեմ գա, օխտ օր էլ չըգաշեց էկար, ի՞նչ ա պատահե:

Մարթը զարմացավ, ասավ.—Ո՞նց թե օխտ օր, իրեք տարի մե մարթի տունը մշակ եմ հելե, դու ասում ես՝ օխտ օ՞ր:

—Ա՛յ մարթ, հո խելքտ չե՞ս թոցը, օխտ օր հէսօր դու գացեր, ահա, տե՛ս էրեխեքիտ վրափի շորերը, էսի իրեք տարի հառեչ առած շո՞ր ա, թե՞ էլի էն խներն ա:

Մարթը հիշկաց, տեսավ՝ հեչ մե բան էլա չի փոխվե:

—Կնի՛կ, էսի հո էյրազ չի՞:

—Ա՛յ մարթ, ի՞նչ էյրազ, դու օխտ օր հառեչ գացիր, հէսօր էկար, տղեն էլ հէսօր ա էկե:

Մարթը էրեխեքին տվեց հիրանց շորերը, կնգան էլ հիրան նվե-րը, խաց դրեց քուրսու վրեն ու ասավ.—Իմ իրեք տարվա հախը էս ա, տանտերը տվեց, ասավ, որ կըտանես տունը, ետո կըկղըն: Դանա՛կ բերեք, կղբենք:

Կնիկը դանակ բերեց, կղրին, խացի մըշից ոսկին չոռալեն թա-փավ քուրսու վրեն: Նորից ուրիշան, հելան քնան: Ետո լավ տուն շինին, լավ աբրուստի տեր դարցան: Էն մարթը, որ ըստրան մշակ էր բռնե, սուրփ էր, ճամբեն էլ փորցողը էն մշակ բռնող սուրփն էր: